


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱՍՏՈՍՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 16 ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 26, 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Հ Ր Դ Ե Հ ՍԲ. Փ Ր Կ Ի Չ Ե Կ Ղ Ե Ց Ի Ո Յ Մ Է Ջ (Մեր Յատուկ Թղթակցէն) Ուսթըր, Փետր, 20. Այսօր (Կիրակէ) երեկոյեան ժամը 5 ին ամեն կողմ լուր տարածուեցաւ թէ Հայոց Եկեղեցին Հրդեհ ծագեցաւ. բարեբաղդարար դրացի Հայեր և քաղաքային ջրհանկիրներ շուտով օգնութեան հասան. բայց երբ ատնք եկան, կրակը արդէն մարած էր: Հազիւ 25 Տօլ. վնաս կ'ու: Ի կեղեցին սպառնումագրուած է: Հրդեհը բուն իսկ ժողովարարին մէջ ծագեցաւ ճրագէ մը. միայն առաստաղին մի քանի սոսիսակները սկսեցան ամբողջովին այրեցան գունաւոր թուղթեր և մէկ խորագրով:

Ն Ա Մ Ա Կ Կ Պ Ո Ղ Ս Ե Ն Յունվ. 25, 98 Հին բարի ժամանակի մը կար որ, երբ Իզմիրիան Պատրիարքը Դեսպաններուն կը ներկայացնէր Հայաստանի գաւառներու սոսիսակ վիճակը, ժողովրդի ահաբեկի կացութիւնը, քաղաքականապէս և քրիստոնէսապէս մեզ համակողմ հասկացաւ, Եւրոպական Տէրութիւններու այն մեծ պաշտպանութիւնը որ վայելցնէր, պատճառով թէ քաղաքական էր և թէ կրօնական: Դեսպանները Պատրիարքի խոստագէտ երևոյն կը նեւաէի բազմաթիւ ծագած համբաւուար Ծրագիրը. «Համբերեցէք քանի մը շարաթ ալ, օրեր ալ»: Եւ այն իսկ ժամերու իջաւ համբերելու ժամանակամիջոցը. անգամ մը որ ծրագիրը ընդունուէր, ալ վերջացած էր ամեն բան. խաղաղութեան և երջանկութեան ոգին ալ պիտի թագաւորէր Հայաստանի վրայ: Զուրիցիական դժոգք պիտի ըլլար Հայաստանի քով: Ծրագիրը, միայն Ծրագիրը պէտքէր ընդունուէր. «Ծրագիրը ընդունուած» Հայաստանի համար «Եղիցի Լոյսն» էր. ալ ազատութեան և երանութեան լոյսը պիտի ոլողէր Հայ աշխարհը: Ժողովրդի ամեն զժգոհութեան, զըրկանքին ի պատասխան, Պատրիարքարանը մէկ լառով կը պատասխանէր. «Ծրագիրը:» Անցան այն ժամանակները, բայց հիմայ ալ նոյն իսկ Պատրիարք մըն է որ բառ մը գտած է որով գաւառներէն իրեն ուղղուած սրտաճմլիկ նամակներուն պատասխան կը գրէ—«Ոնդիրները—Օրմանեան Պատրիարքը քանի մը ամիսէ ի վեր, մասնաորարար վերջերս, իւր քարոզներուն ու նամակներուն մէջ կրտէ թէ շատ մօտ է այն երջանկաւէտ օրը երբ իւր հայրա-

խամ Սուլթանին իւր մատուցած «Ոնդիրները» պիտի «գործադրուին», ու ալ անկէ վերջ փոխուած է ամեն բան. այս «Ոնդիրները» գերբնական ուժով մը պիտի կերպարանափոխեն մեր վիճակը, և անպատում երանութեան մէջ պիտի ապրինք, այնչափ երջանիկ որ թերևս ալ Օրմանեան Պատրիարքին անգամ հարկ չը մնայ Պատրիարքարանի մեկամաղձիկ շէնքին մէջ նստելու, այլ կ'առաձնանայ Լատինական կուսանանց վանք մը: Ետտ մը հետաքրքիրներ Հարցուցած են Ս. Օրմանեանին թէ ինչ է նա այն «Ոնդիրները», որոնք մատուցած է Սուլթանին: Ասոնց ամենուն ի պատասխան՝ Պատրիարքը անցեալ օր պատասխանեց. «Վերջերս Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւը ունենալով, կրկին գիտ վաստակացուց իմ մատուցած «Ոնդիրները» նկատուողութեան պիտի առնէ: Ահա ինչ հետաքրքիրներուն գոհացում տալու համար, անցեալ օր արթ օր այս յայտարարութիւնն ալ ըրաւ Պատրիարքը—Անհունապէս ուրախ եմ որ այսօր Պալատական Թիկնապաշտ մը քով ըլլալով, Վեհ. Սուլթանի բարձր բարեկրօնական հետ բերաւ նաև անոր խոստումն թէ՛ Նորին Վեհափառութիւնը մօտ օրերս նկատի պիտի առնէ «Ոնդիրները»:» Սրբազան, թերևս դուք ալ շէք հաւատար թէ Ձեր այդ «Ոնդիրները» որք եթէ ընդունուին Սուլթանէն, պիտի կրնան մազի շափ փոխել զաւանակը Հայ ժողովուրդի ամենաթշուառ կացութիւնը. թերևս դուք Ձեր հանրածանօթ ճիզուրիթութիւնը կը բանեցունէք ու շէք ուզեր որ յուսահատութեան անդունդին մէջ զահալիթէ ազգը. ուստի շինծու յոյսերով կորբէք զայն. բայց ազգի այս ամենասոսկալի դրութեան մէջ զինքը սին յոյսերով քննանելը շատ աւելի վնասակար է:

ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՍ ՅՈՒՍԹՐԸՐ Կիրակի օր Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ Վարդանանց հանդէսը տօնուեցաւ շքեղ կերպով: Ս. Մաշտոց վարդապետ սկսեց Ս. Պատարագը մասնակցութեամբ առաջնակարգ ձայնաւորաց, որք կարծես թէ նոյն օրը զուգադիպութեամբ Ուսթըր ժողոված էին. դուրսէն եկած էին Պրք. Պուշաքեան, Սէ. մէրճեան, Թաճեան և Լուսարարեան, որք աննման ոգևորութիւն մ'ազդեցին ներկայից, որոց թիւը 300 իշափ էր: Յաւարտ Ս. Պատարագի ձայնաւորաց խումբը Ս. Հայրը առաջնորդեց

ժողովարարն «նորահրաշ» շարականաւ: Սրահը շքեղօրէն զարդարուած էր, մանաւանդ ընտր, ուր գետեղուած էր Դամբարան մը, որոյ վերայ ծաղկեայ տառերով գրուած էր, «Երգ և ժօրգ դար, Անձնուէրք Հայաստանի»: Վրան երկու մերկացուած սուրբեր և Վարդանանց Պատերազմին լուսանկարը, զետեղուած կարմիր շքեղանակի մէջ: Հոն կատարուեցաւ հոգեհանգիստ նոր նահատակաց համար ալ. և ժամարար Հայրը խօսեցաւ դամբանական քարոզը. շեշտելով Վարդանանց քաջութեան վրայ, և շատ յոտակօրէն բաժատրեց անոր անձնուիրութիւններն, որք Պատկուեցան Վահանայ յայթաթութեամբ յիշեց նոր նահատակներ և յետոյ մատնանի ըրաւ երեք անձեր, որոնց նկարները զարդարած էին սրահին ճակատը. մին՝ Վեհափառ Հայրիկին՝ երկրորդը իզմիրիան Սրբազանին, իսկ միւսը՝ Բաթիթի: Յոր դորեց ժողովուրդը որ նմանին անոնց, ունենալով Հայրիկի պէս գերազանց զգացում և անշահախնդրութիւն. իզմիրիանի պէս երկաթեայ կամք, և Բաթիթի պէս միտք ու հանճար. և իր խօսք փոսկեց օրհնելով Վարդանանց զօրաւորաց հետեւողներին ու անոր ժօրգարու զօրաց յիշատակը: Հոգեհանգիստէն յետոյ Ս. Մաշտոց վարդապետ նախագահեց հանդէսին, իսկ ատենակցեց Հոգաբարձութեան Ատենակցի Պ. Պ. Գուլամեան: Յատուկ ատենախօս հորախրուած էր Տրքթ. Այվազեան, որ բացատրեց Վարդանանց քաջութիւնները, բազմաթիւ իր զարու Յազկերտները ժօրգ դարու Սուլթաններուն հետ: Ետտ յուզիչ խօսեցան Տրք. Վ. Գուլամեան և Մ. Տօլմաճեան: Ս. Ս. Ետեղու Պեան կարդաց Եղիչի «Տիկնայք փափկատուեք»ը: Մտնուկ մը արտասանեց Ալիշանի «Ո՛հ դու բարեկամ», երգը, զոր աւարտած ատեն դամբանի մէջէն դուրս եկաւ ոգի մը, Վարդանի ոգին և պատասխանեց ազգու ճառով մը. այս ոգին էր Պ. Մերուսեան: Հանդէսը փակուեցաւ նախագահ Հօր շնորհակալութիւնով և աղօթքով: Վ. Ա. Ան

ՉՈՂԱՅԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ Փարիզի Աստի Դատարանը, աւելի ճիշդը կատարութիւնը, մէկ տարի բանտարկութեան և 3000 Քրք. տու գանձի դատապարտեց Տրէյֆուզի անմեղութիւնը պաշտպանող վիպասան Զօլա, որ Տրէյֆուզը դատապարտող գինորական տտեանը անիրաւ հրատարակած էր: Միլիոնատէր վիպասանին համար հարկու դրամական տուգանքը ոչինչ է. բայց բանտի Պատիժն ալ Զօլա չը նկատէր ամօթ մը իրեն համար, այլ կը յայտարարէ թէ ինք կ'առաջարկէ անարդարութեան զոհն է, և իւր բանտարկութեան վճիռն ալ, ոչհետու սպաղային մէջ, իւր փառքի պատիւ պիտի ըլլայ, և այսօրուայ անկցի Զօլա աղաղակող ամբողջ վաղը պիտի ոգբայ իւր յիշատակը իրեն ճշմարտութեան և իսկալի մարտիրոս մը:

ՀԷՐԱՆԻ ԹՂԹԱԿԻՑԸ Հէրալտի Հայաստանի դրկած մասնաոր քարոզիչ-թղթակիցը անցեալ օր հասաւ Նիւ Եօքը: Նոյն թերթին մէջ կը յայտարարէ թէ «վերջին կոտորածներուն զոհ զացող Հայոց թիւը կարծուած էն և հրատարակուած էն շատ աւելի է: Տրքթ. Հէֆթըրտ հեռանալով վաստիորի զուարճալի արիւրէն և Սուլթանի հիւրասիրութիւններէն, Նիւ Եօքը մէջ այնքան յուսալի կերպով չը խօսիր «բարի, ազնիւ և անմեղ» թուրքերու մասին, այլ յուսահատ շեշտերով կը գրէ Հեռալտին մէջ թէ, «ես չեմ հաւատար որ Սուլթանը պիտի կրնայ բարեկարգել Հայաստանը»:

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՅԵՂ. ԲՈՒԻՐԸ Մակեդոնական Յեղ. Բոուիլդէն ազգու շքարեւակաւ մը ցրուած է Մակեդոնիայի յեղափոխականներուն, որով կը հրաւիրէ զիրենք միանան յառաջիկայ դարնան ծագելիք ընդհ. յեղափոխութեան: ԱՉԳ Փրովիտէնէն Ս. Վաղինակ վարդապետը կը ծանուցանէ թէ, Գէորգ Գալաֆեան անուն անձին ուղղուած նամակ մը կայ. իւր քով: Յիշեալին հասցէն գիտցողները, թող հաճին դիմել վարդապետին կամ Տիգրիսի իմբաքրութեան: Ն Ա Ի Ա Յ Ի Ն Լ Ո Ի Ե Բ Երէկ հասած Սքօթիա — — — Լիվերփուլէն Այսօր գալիք Գամբունէյ — — — — — Հազարէն



ՇԱՐԱԹԱԹԵՐԻՔ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կը Հրատարակուի մէջն Շարաթ օրեր,

ՏԻԳՐԻՄ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑՆԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍԹ.	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսեայ	1 50	Բաժանորդագրին կԱՆՈՒԿ	
Եռամսեայ	75	վճարելի է միշտ:	
	40		

Օրար կամ նամակ ուղղել Հնտեւեալ Հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻՔ, ՇԱՐԱԹ՝ ՓԵՏՐՎԱՐ 26 1895.

Ն Մ Բ Ա Գ Ի Մ Ա Կ Ա Ն Ք

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայ գաղթականութեանց մէջ երկրորդ բնութիւն դարձած է Հայ լրագրիւններու համար հանկուտութիւններ ընկ երբեմն, անանկ որ վերջի տարե տարիներէ ի վեր մեր ազատական լրագրիւններն նուիրատուութիւններով ապրած են:

Մեր նպատակը չէ այս մասին քննադատութիւն մը բնել, այլ կը փափաքինք ըսել թէ մեր վարչութիւնն զէթ ՏԻԳՐԻՄ մասին, այս սովորութեան հակառակ է գլխովին: Մենք՝ առանց փոխարէն մը տալու՝ ժողովրդէն դրամ աւերակալելն ու պահանջելը մուրազկանութիւն կը նկատենք, անանկ որ լաւագոյն կը սեպենք թերթ մը չի հրատարակել, քան նուիրատուութեամբ ապրել: Այս համոզմամբ է որ ցարգ մերժած ենք մեզ զրկուած նուէրներն և պիտի մերժենք միշտ, գոչ ըլլալով որոշուած գնով միայն:

Այս յայտարարութիւնն ընկելով կը յուսանք թէ պատասխանած կ'ըլլանք անոնց որք կը կարծեն թէ մեր «գոյնը» անխառն պահող» լրագրիւնը ինչ ինչ խնդիրներու մէջ «կը ստառապի երկու այրուող հարցերի մէջ» — իր արժանապատուութիւնը թէ քանի մը բաժանորդներ փրկել: Այսպէս ըսած էր վերջերս Արմէնիաի Գաղաքիս թղթակիցը իր ապացոյցներն քաղելով Գաղաքական տեսութենէ մը, «որ չիփոխած էր «առաջնորդող խմբագրականներու» հետ: Բանի որ պատճառն» որմէ ըզրիւմ է այս հետևութիւնն, անհիմն է բոլորովին, աւելորդ կը սեպենք ուղղակի պատասխանել այսպիսի տրամաբանութիւն ունեցող հրատարակագիրներու: ՏԻԳՐԻՄը ո՛չ միայն իր կարծիքն չի վաճառեր, այլ և նուիրատուութիւններն, որով ապրած են ցարգ մեր միւս թերթերը, մերժած է ու պիտի մերժէ միշտ:

★ ★ ★ ★ ★

Կը ցաւ ինք որ մեր ուղղութիւնն չի հասկցողներ կան տակաւին, և այդ՝ հրատարակագիրներու մէջ: ՏԻԳՐԻՄ գաղափար ուղղութիւն մը չունի որ պահէ ժողովուրդէն, և պատճառ մ'ալ չունի այդպիսի աչքակալի խաղալու: Մեր ուղղութիւնն լրջօրէն քննադատողի մը յանձն կ'առնենք պատասխանել, բայց ոչ ինչ կրնանք ըսել անոնց, որք զայն չեն կրցած ըմբռնել: Ասոնք կը կարծեն թէ ազատական թերթ մը՝ գոյն ու ուղղութիւն չի կրնար ունեցած ըլլալ մինչև որ կուսակցութեան մը գրօշին տակ չի մտնայ: ՏԻԳՐԻՄ ազատ և անկախ թերթ մ'է, որ կը հրատարակուի իւր կանխաւ գծած ու որոշած ուղղութեամբ: Թերթիս նպատակն է յարաբերութեան կապ մը լինիլ գաղթականութեանց մէջ. պաշտպանել անոր շահերն. հաղորդել ազգային, քաղաքական, տեղական և այլ լուրեր. և յուզել այնպիսի խնդիրներ, որք՝ մեր կարծեօք՝ կրնան օգտակար լինիլ թէ՛ գաղթականութեանց և թէ՛ Մայր երկրի շահերուն:

★ ★ ★ ★ ★

Որպէս զի ուրիշ առթիւ մեր մասին խօսելու պէտք չունենանք, աւելորդ չենք համարեր ըսել նաև թէ մենք ՏԻԳՐԻՄը կատարելութեան հասած թերթ մը չենք նկատեր, և հետևաբար Ամերիկեան գաղթականութիւնն անարժան չենք համարիլ անոր. և կ'աշխատինք թերթը օրէ օր զարգացնել՝ առանց սակայն մեր ուղղութեան ԳՊԵՆՈՒ:

ՍՊԱՆՈՒՅ ԵՒ ՄԻԱՑՆԵԱԼ ՆԱՀԱՆԳ

Մէջն մարտանաւի պայթելէն ու ընկղմելէն ի վեր, Ամերիկեան ժողովուրդը, և կամ աւելի ստոյգը խօսելու համար, Ամերիկեան Մամուլը պատերազմի ջերմէ մը բռնուած է, այնչափ սաստիկ որ յաւելուածներ ծախող տղայոց աղմուկէն փողոցներէ անցնել գոտարութիւն մը եղած է: 1870ի պատերազմը հրատարակուած աստիճանը, Գաղղիացիք ալ այսպիսի գրգռման մէջ էին. ժողովուրդը յուզմամբ արեցած՝ Փարիզի պուլվարներուն վրայ «Պէտլին, Պէտլին» կ'աղաղակէր: Այսպէս ալ Ամերիկացիք «Մատրիօն» կը պոռան:

Արդեօք Գաղղիացիներուն պէս — որք Պէտլինի ճամբուն վրայ մնացին ու ամօթահար Փարիզ գալով բանտարկուեցան — Եւրոպայի ալ Մատրիօնի կամ Հալանայի ճամբան պիտի չի մնան եթէ պատերազմ ըլլայ:

Այս հարցին պատասխանելու համար, պէտք է կարճ տեսութիւն մը ընել իւրաքանչիւր Տէրութեան դիրքին, ոյժին և այլ պարագաներուն վրայ:

Սպանիա աղքատ ազգ մ'է, բայց իր աղքատութեան ու անկարող վիճակին մէջ՝ իր բոլոր հպարտութիւնը կը պահէ տակաւին. իր երակաց մէջ կը վազէ դեռ իւր նարնկեայ քաջ արիւնք՝ պահելով այն զինուորական ուժին որով երեք հարիւր տարի Եւրոպայի և Ամերիկայի մէջ առաջնութիւն վայելեց: Արդարև երեք տարիէ ի վեր թէև Սպանիա Գուալտի պատմութեանը ճնշել կ'աշխատի, յուսահատութիւնը յուսահատութեամբ հարուածելով, բայց մտնալու չէ թէ այնպիսի գործեր ալ կատարած է որք զարմացուցած են զաշխարհ. Սպանիան չէ՞ր որ նախալիտիան յաղթեց: Մարտիկոյի, Օթէրլիցի ու Վալարաի զինուորները չէին կրցած յաղթել Սպանիական զօրութեան, անանկ որ նախօրէին աստղը այնտեղէն սկսեց խոնարհել ու գնաց Վալարաի արևմտ գաւառին վրայ մարտի:

Եթէ Հիմայ պատերազմ մը ըլլայ, Սպանիա անշուշտ վերջին ճիգ մը պիտի ընէ, որ կարելի է փրկէ զինքը. իսկ եթէ յաղթուի, իր վիճակն կ'ստիպուի զէջ չի պիտի ըլլայ:

Այսպիսի պատերազմի մը ժամանակ երեք գլխաւոր երևոյթներ կրնանք սկիզբէն: Ա. Ամերիկացիք Գուալտի զօրութիւն մը պիտի զրկեն, և Սպանիացիք ալ պիտի դիմադրեն անոր: Բ. Սպանիացիք իրենց բոլոր ոյժերով Ամերիկեան ծովեզրին վրայ պիտի յարձակին՝ քանի մը քաղաքներ գրաւելու համար: Գ. Ամերիկացիք Սպանիոյ և անոր ուղիներուն մէջ ունեցած Զիւլիփին կղզեայ վրայ պիտի յարձակին:

Գննել առաջ այս կէտերն, ու ընդհանուր սկզբունքը ըմբռնելու ենք նախ թէ որք ծագող զորութեանց պատերազմաց մէջ յաղթութեան համար պայմանն է «որոշուած տեսն, տեղ մը, ամենակարճ ժամանակի մէջ՝ շատ զօրք կամ մարտանաւ ժողովել», որմէ կը հետեւի թէ երկրի մը մեծութենէն, շատ զօրք կամ մարտանաւ ունենալէն միայն կ'ստիպուի չի յաղթուի:

Առաջին պարագայի մէջ, Ամերիկացիք գոնէ պատերազմ հրատարակելէ առաջ, 50,000 զինուոր զրկելու են Իրիպա: Այս զօրքերն չոգենաներով կը փոխադրուին. Ամերիկացիք չունին զօրք փոխադրելու յատուկ նաւեր, և պիտի ստիպուին մարտանաւեր գործածել: Արդ, քանի՞ մարտանաւ պէտք կ'այ այդչափ զօրք փոխադրելու համար: Գիտնալու է թէ զօրքին նաև հրազէն, ձի, ռազմամթերք պաշար են. տանելու է: Գաղղիայ, որ այսօրինակ պարագաներու համար յաւ պատրաստուած ազգ մ'է, ինչն'ը քաջեց Մատակաքար 15,000 զօրք տանելու համար: Ենթադրենք թէ 50000 զօրք Գուալտի զրկուեցան. հնար է որ ասոնք, որոց շատերը իսկ մարդիկ են, զօրապետ եղած զրազիրներ, գործարաններէ եկող զինուորներ, բոլոր կեանքերին զինու տակ անցուցած 150 հազար Սպանիական զօրքի գէմ կենան ու յաղթեն:

Պիտի առարկուի անշուշտ թէ Սպանիացիք ինչո՞ւ Իրիպայի չի կրցին յաղթել իրենց այդ զօրութեամբ: Ասոր պատասխանը շատ պարզ է. որովհետև Իրիպայի կանոնաւոր պատերազմ բնաւ չըրին Սպանիացոց հետ՝ կազմակերպուած բանակով: Այս առթիւ մտնալու չէ անշուշտ թէ Ռուսիայ Չէքքէզները յաղթելու համար, որչափ երկայն ասան ստիպուեցաւ իր սուկալի զօրութիւնն գործածել: Ի հարկէ երբ Ընքըլ Սամ բախի Սպանիոյ հետ Հալանայի մէջ, Իրիպայի պիտի օգնեն Միացեալ Նահանգները մը պիտի ունենայ, որովհետև անկանոն կերպով պատերազմողները կրնան վնասել թշնամիին, բայց յաղթութիւն մը երբէք չեն կրնար տանիլ. ասոր իբր ապացոյց կրնանք մտնանիշ ընել 1870ի ժամանակ Գաղղիական Ֆրանցիականներն և Իտալական կառավարիչները:

Նշանակելի կէտ մ'է նաև նաւատորմի մը մայր երկրի հետ հարաբերակցութեան մէջ պահելու ինչիբր: Գուալտի զօրութիւն մը յարաբերութեան մէջ պահուելու է Միացեալ Նահանգաց հետ: Կը կարծուի թէ Սպանիական մարտանաւեր պիտի թշուարեն Ամերիկեան չոգենաներն ազատ կերպով երթնելի Հալանայ: Եւ արդեօք առաջինք չի պիտի ջանան Ամերիկեան բանակ մը փոխադրող զրահանաւներն Մէյնի բազմիկ արժանացնել՝ Գուալտի հասնելէ առաջ:

(Շարունակելի)

Ո Ր Բ Ե Ր Ո Ւ Ս Ի Ի Ն Ա Կ Ը

(Պաշտօնական)

Փետրվար 22, Ուոթըր, Ս Փրկիչ Եկեղեցի Հայոց.

Զգալապէս կը յառաջդիմէ որբերու գործը, որոց համար կուգամ հրատարակու խնդակցութիւնն ու շքանորակութիւններս յայտնել յիշելով նորութիւնները՝ քաջալերելու համար այդ Ս. գործը:

—Միլիթերտի (Մէս) 10-15 Հայերը՝ իրենց մէջ հանգանակելով 25 չտղար, զրկեցին ինձ ինպատ որբոց գոհութեան արժանի է յիշուի այս ինքնաբեր նուէրը. փափաքելի է որ ամէն ցրուած Հայեր այդպէս ինքնաբերաբար մտածեն:

—Ուոթըրի մէջ երկու հարասնիքներու ուրախութեանց մէջ ալ շքանորակութեան արժանի է յիշուի Յովակիմեանի հարասնիքի մէջ հանգանակուեցաւ 7.40 տղար, իսկ եղեցիցի Պ. Նազարէթ Յակովբեանի հարասնիքի մէջ՝ 20 տղարէ աւելի: Այս նորութիւնն ալ ջերմապէս կը յանձնարարենք. նորութիւն՝ որ կը նմանի Պոլսոյ «Գիտնաւ ծաղկեփունջին» Ազգ. Հիւանդանոցի եղած նուէրներուն:

—Ուոթըրի մէջ եղած հանգանակութեան արժանիքէն 30 Օսմանեան սուկի խրկուեցաւ Խարաբը՝ 4 անձէ բաղկացեալ մասնախումբի մը, որ կամ Ազգ. Հովանաւորութեան տակ բացուած որբանոցին այս և կամ որբանոցներէ դուրս թափառող անպաշտպար որբերուն բաշխէ: Մնացեալ զբամբ և շարունակելի հանգանակութեանց արդիւնքը՝ բոլորը Պատրիարքարան պիտի զրկուի՝ ընդհանուր որբոց համար:

—Մասնաւորապէս ամենուս սիրելի վարագայ Որբանոցին նրեթապէս օգնելու համար «Օթանգակ Միութիւն» մը հաստատուեցաւ. ասոր վրայ քիչ ատենէն աւելի մանրամասն տեղեկութիւն պիտի տամ:

—Այս վայրկեանս Նի. Եօրքի Հայուհեաց Որբանոցի Ընկերութեան Գործադիր մարմինէն ստացայ պաշտօնագիր մը, որով կ'աւանդուի թէ որոշած են առ այժմ վեց որբ պահել իբր որբեգիր՝ Մայր երկրի որբանոցներու մէջ, և բանակցութեանց համար տեղեկութիւններ կ'ուղղին: Ամենայն խնդակցութիւնն Հայուհեաց Որբանոցին այս առաջին գործնական քայլին համար:

Մնամ Աղօթարար ՄՕՇՈՅՑ ՎԵՐԳԱՊԵՏ

Իսթ Վէյմսթրիթ, Փետր. 22

Գրեթէ Հինգ ամիսներէ ի վեր, տեղոյս 18ի շափ Հայ գաղութի մէջ եղած անտարբերութիւնը, անձնական գնում հաշիւներէ յառաջացած ասելութիւնն սկսաւ կամայ կամայ անհետանալ. . . . արդարև ՏԻԳՐԻՄը Ամերիկայի Հայոց մէջ բարոյական ցնցում մը յառաջ բերաւ: Ուրախալի է ըսել որ երէկ Փետրվ. 20, կիւրակի օր ժողով մ'ունեցանք. թէև ժողովի ընդհանուր փափաքն էր Օրուայ խնդիրը, այսինքն Որբանոցի Ընկերութիւն մը հաստատել, բայց ինկատի առնելով, որ տեղոյս գործաւորական կեանքը գրեթէ բոլորական փոփոխման ենթարկուելու վիճակին մէջ, չի պիտի կարող ըլլանք մեր փոփաքին համաձայն ընկերութիւն մը կանգուն պահել, ընդհանուր հաւանութեամբ որոշուեցաւ, քանի որ հոս Հայ կան, թամանակ առ թամանակ հանգանակութեան բռնալի նպատակ որբերու, և հատկապէս զրկել Պատրիարքարան, որով մեր ազգային պարտականութիւնը այս կերպով կատարած կ'ըլլանք: Նաև ուրախալի է ըսել որ յաջող կ'ուրակէ կ'ունենանք մեր Թանգարանի միութիւնը՝ արդէն ծրագրելու պատրաստուելու վրայ է:

Գ. Կ. ՏէՕԲՄԷՃԵՆՆ

—Ֆրանսիայի շոգարարները... Կրկին 13ի կիրառելի երկրային, տեղային Հայերն ընդհանուր ժողով մը բրած են ատենապետութեամբ Տ. Ա. Վարդապետանի. որոյ թելադրութեամբ հանգանակութիւն մը եղած է Քէսրիկի որբերուն ինպատակ: Հանգանակութեան արդիւնքը՝ 822.77, դրկուած է «որոշեալ տեղը»: Ֆրանսիայի մէջ կան 15 Բէս-րիկի Հայեր, և ունին ազգային Գըրադարան մը, որ հաստատուած է ամիսէ մ'ի վեր:

—Քաղաքի Սեբաստիոյ որբանոցի Օթանդակ Ընկերութիւնն, որ ամիսէ մ'ի վեր կազմուած է, իր տարեկան ժողովոյ մէջ հետեւեալ պաշտօնեաներն ընտրեց: Տըք. Մ. Յ. Թաշ-ճեան՝ Ատենապետ, Ն. Մ. Պոյաճեան՝ Ատենապետ, Նշան Ղաւեան՝ Գանձապետ, Գ. Բէօշեան՝ Համարակալ, Ա. Չոքեան՝ Կնքապաշտ, Ա. Տէսթէ-Եան և Յ. Մ. Պոյաճեան՝ Հաւաքիչներ: Բանի մը շարքով առաջ, Ընկերութիւնն 50 տարի ցրկեց Սեբաստիոյ որբանոցի վարչութեան, և աւելորդ է ըսել թէ արժանի է ժողովուրդի ձեռնառութեան: Օգնել փափաքողներ իրենց նուէրներն պարտին վրկել Միութեան Ատենապետին, որուն հասցէն է, 154 Իսթ, 27րդ փողոց:

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԿԱՃԱՌԸ

Երեք տարիի շափ քիչ շատ յաջողութեամբ յառաջ երթալէ վերջ, քաղաքիս Հայկազեան Կաճառը կործանելու շափ ծանր ցնցում մը կը բեց անցելու երեկոյ: Այս ընկերութիւն կազմուած էր իր անդամներուն զինուորական կրթութիւն ստիպեցնելու յոսով: և այս երեք տարուան ընթացքին մէջ ո՛չ միայն կրցած էր իր նպատակին ծառայել, այլ և բրած էր ուրիշ Ազգ. և բարեգործական քանի մը շնանակի գործեր, որք մտացուած չեն տակալին քաղաքիս Հայոց մէջ: Բայց որպէս զի Կաճառը կարենար իր յուսացած պատուը տալ, անդամները որոշեցին վերջերս մի քանի փոփոխութիւններ մտցնել ընկերութեան մէջ. և այս մասին ինքզինքի մը արձանագար Տըքթ. Կրիբի, որ Ս. Բարթոլոմէոսի կրօնատան նախագահն է, և որոյ հովանաւորութեան տակ կը գտնուին այդ շէնքին մէջ եղող բոլոր կազմակերպութիւններն: Ընդհանուր փոփոխութիւններն էին. Ա. փոխել վարչական ժողովոյ մշտնջենական նախագահը՝ Պատ. Եուհաննայ. Բ. աւելի ժամանակ ունենալ մարզանքի համար. Գ. դուրսէն մարդիչ մը բերել. Դ. պաշտօնական անկարի զիբը մ' ունենալ շէնքին մէջ այնպէս՝ որպէս ևն ուրիշ տեղացի տկու մըները: Անցեալ երկու շարքի երեկոյ Տըքթ. Կրիբը անձամբ եկաւ պատասխանելու Կաճառի Ընդհ. ժողովոյ: Ահա անոնի իր պատասխանները. «Պատ. Եուհաննայ փոխել անկարելի է. այս անձը, որ Ասորի է, մի քանի տարի առաջ մեզ ներկայացնելով քանի մը Ասորիներ՝ անոնց հովիւ եղաւ. և յետոյ անոնեկով որ շատ մը Հայեր ալ ներկայ կը լինէին պաշտօնական արտօնութիւն տուիք իրեն Հայոց համար ալ պաշտամուտը կատարել. ասոր համար էր որ մատուց մը յատկացուցաւ իրեն այս շէնքի մէջ. և որովհետեւ Պատ. Եուհաննայ մեր կողմէ ձեռնադրուած երէց մ'է, և իմ ներկայացուցիչս՝ ձեր Կաճառին մէջ, քնական է որ ինքն մնայ ձեր նախագահն, որպէս էր առաջ: Ինչպէս Չինացիներու տկու մը (Բրիտանոնայ), նոյնպէս և դուք կրնաք այս շէնքի մէջ վայելել ամէն կրօնական առանձնաշնորհումներ. աղօթել, Կիրակնօրեայ դպրոց գալ ևն. ևն.: Բայց եթէ կ'ուզէք իբր տկու մը

ամեն առանձնաշնորհում վայելել, զարարիք միանալ շէնքի ուրիշ խումբերուն հետ և ձուլուիլ անոնց մէջ: Ինձ կերելի թէ դուք միակ զինուորական մարզանք սովորի կ'ուզէք հոս: Եթէ ձեր այս փափաքին տեղի տանք, չէ՞ մի կը բողոքուի մեզ դէմ կառավարութեանց կողմէն»:

Տըքթ. Կրիբի և Պատ. Եուհաննայի մեկնելէն վերջ, ժողովը շարունակուեցաւ. յուսախարութիւնը ընդհանուր էր: Շատեր համոզուեցան թէ երեք տարիէ ի վեր Պատ. Եուհաննայ շահագործուած էին Ս. Բարթոլոմէոսի կրօնատան մէջ: Ուստի երկար խորհրդակցութենէ յետոյ մեծամասնութեամբ որոշուեցաւ ձգել հեռանալ այդ շէնքէն:

Տ. ԹՕՓԱՆԱԿՆ

Միևնոյն նիւթի վրայ գրուած ուրիշ նամակներ ալ ստացած ենք, զորս աւելորդ կը սեպենք հրատարակել: Տիրան կը գրէ թէ Տըքթ. Կրիբը բրած է նաև թէ «մենք չենք ուզեր և չենք կրնար ալ ձեզ թողալու թիւններն, որով ձեր ազգայնութիւնը ուրիշ ուսանձին շրջանակի մը մէջ պահելով՝ գինաձգութիւն ստովիք: Եթէ չէք ուզեր եղածով գոհ ըլլալ, Ամերիկայ ազատ երկիր է, կրնաք երթալ ուր որ կամիք»: Ծն. Խմբ.

ՊԱՏԱՍԽԱՆ «ԱՐՇԱԼՈՅՍ»ԻՆ

Ուէսթ Հոպոքընի մէջ եկեղեցի մը շինելու խնդրոյն դէմ երկու յորուածներ հրատարակուեցան ՏԻԳՐԻՍԻ մէջ: Ատոնց առաջինը Պոսթոնէ կուգար՝ Արշալոյս Արգէոսի ստորագրութեամբ, իսկ վերջինը՝ Նիւ Եօրթի «Շանթը» շանթած էր:

Նախ պատասխանեք առաջին նամակագրին փաստերուն.

Ա. Արշալոյսի առաջին փաստը Ուսթըրի եկեղեցւոյն պարագի տակ ըլլալն է ցարդ: Աւելորդ է ըսել թէ ոչ ոք կրնայ այս կէտն իբր փաստ ընդունիլ, վասն զի այս կամ այն եկեղեցւոյն պարտք ունենալը չի կրնար ապացուցանել թէ Ուէսթ Հոպոքընի մէջ եկեղեցի մը շինելու ֆիտասակ ձեռնարկ մ'է: Եթէ այսպիսի հաստատութիւն մը օգտակար է Հայոց, չէնքին պարտքի տակ ըլլալն՝ անոր օգտակարութիւնը չի կրնար ֆիտասի փոխել. իսկ եթէ այսպիսի ձեռնարկ մը ֆիտասակար է ազգին, պարտք չունենալն իրաց վիճակին մէջ փոփոխութիւն մը յառաջ չի բերեր:

(Հոս անցողակի հարկ կը սեպենք ըսել թէ ձեռքի մէջ, այս կառուցութիւնը չէնքին ու հողին համար պիտի ծախուի ընդամենն 2,000 տոլար, որուն մէկ երրորդը հանգանակուած է արգէն: Յանձնախումբն թէ և հողըն պիտի գնէ այս օրեր. բայց շինութեան չի պիտի սկսի մինչև որ պէտք եղած դրամը չունենայ իւր արամադրութեան տակ: Եւ չէնքը աւելորդ է ըսել թէ, պիտի ըլլայ համեստ հաստատութիւն մը, որ պիտի ծառայէ իբր եկեղեցի, թանգարան, լսարան, ժողովարան և թերևս դպրոց՝ Ուէսթ Հոպոքընի Հայ մանկտանց համար:)

Բ. Արշալոյսի երկրորդ փաստը սա է թէ, եկեղեցին պատճառ պիտի ըլլայ «Գաղթականութեան մը ահագին հոսանքին ևս անկի տարու». և կը յարէ թէ «Ուսթըրի եկեղեցին իր դերը ունեցած է Հայ գաղթականներու շարունակ գէպի Ամերիկայ ուղղուելուն»:

Չարմանալի՜ արամաբանութիւն: Հայաստանի խորիքէն մինչև Ամերիկայ գաղթականներ բերելու զօրութիւն ունեցող այս Ս. Փրկիչ եկեղեցին՝ չենք կրնար հասկնալ թէ ինչո՞ւ Նիւ Եօրթի և ուրիշ քաղաքաց

Հայերն Ուսթըրի չէ կրցեր տանիլ: Մեր գաղթականութեան մէջ չկայ սակայն մէկը, որ Նոր Աշխարհ եկած է, յիւսթըրի եկեղեցի մը գտնուած ըլլալուն համար: Գոցէ՛ այդ քաղաքին թելի գործարանը, և տես թէ քանի Հայ պիտի կրնաս գտնել Ուսթըրի մէջ հաստատուած: Հայը եկեղեցիին համար չի գար հոս Հայաստանէն, այլ եկեղեցին է որ կուգայ մեր ետեւէն՝ այս երկրի մէջ ալ՝ կարելի եղածին շափ՝ մեր ազգութիւնն պաշտօնէ և համար, ինչպէս որ պահպանեց շատ դարեր առաջ: Մատակարարի մէջ եթէ Հայ եկեղեցի մը կառուցուի, ո՞վ կրնայ ըսել թէ Հայք պիտի սկսին հոն գալթել, փոխանակ ուրիշ տեղեր երթալու:

Եթէ հոս եկեղեցին չի կառուցանելն կարենար Հայ գաղթականութիւնն կեցուցնել, գէթ մասամբ, մենք մեր քուէն ոչ միայն պիտի ստիճեք Արշալոյսի կարծեաց ի նպատակ, այլ յանձն պիտի առնէինք Ս. Փրկիչն ալ փլցունել, Վարդապետներն ու Տէրտէրներն Հայրենիք զրկել անմիջապէս:

Բայց ճշմարտութիւնն սա է թէ՛ եկեղեցի շինել չի շինելը գաղթականութիւնն կեցնելու խնդրոյն հետ ընաւ յարարեութիւն չի կրնար ունենալ: Եւ բացի ատկէ յիշելու ենք թէ եկեղեցի մը, մանաւանդ Ուէսթ Հոպոքընի մէջ շինուելիք եկեղեցին, պիտի կրնայ ըլլալ միակ ու յարմարագոյն վայրն, ուր խօսող ու խորհող դասակարգը գաղթելու ֆիտասները ժողովրդին ցուցնելու և քարոզելու լաւագոյն առիթը պիտի ունենայ:

Գ. «Արշալոյս»ի սոյն փաստն ալ տկար է: Յօդուածագիրը կը կարծէ թէ այս շէնքին համար մէկ երկու հազար տոլար ծախանելով որբերը սովորած ըրած պիտի ըլլանք: Սակայն ո՞վ կրնայ ըսել թէ, այս նպատակին ցարդ հաւաքում զբառն, եթէ ժողովրդի գրպանը մնացած ըլլար, որբերու խնդրոյն պիտի յատկացուէր, նուիրատուներու կողմէ: Եւ մնաց որ այսպիսի շէնքի մը կառուցուիլն ո՞վ չի գիտեր թէ որբերու խնդրոյն համար մեծ օգնութիւն մը պիտի ըլլայ ապագային: Գիտնալու է թէ մեր որբերն մէկ երկու տարիէն չեն լինինար: Այս խնդրի համար շատ գուժարու միտք, ժողովներ ու հանդէսներ պիտի ըլլան ամեն Հայաբնակ քաղաքներու մէջ: Ուէսթ Հոպոքընը ալ իր մասն ու բաժինը պիտի ունենայ: Իւր սեփական շէնքը — եկեղեցի — ժողովարան — ևն ծառայութիւններ պիտի մատուցուին այս մասին. ուր միայն կարելի պիտի ըլլայ ի մի բերել թէ կրօնասէրը, թէ ազգասէրը թէ անտարբերն, և, եթէ կան, անհաւատներն ալ:

Մենք կ'ընդունինք թէ որբերու խնդիրը օրուան ամենակարեւոր հարցերէ մին է, բայց այդ չի նշանակեր թէ ուրիշ ամեն բան ձգելու ու միակ որբերու վրայ մտածելու ենք: Դուք տեսած էք ճիշտապէս միայն իր, որ զլիարցաւ ունենալուն համար ընելու է, առանց միւսը մոռնալու: Եկեղեցի-ժողովարանը շինեք, բայց և այնպէս որբերը չի մոռնանք:

Արշալոյսի ամենէ գործաւոր փաստը վեհ է: Հայրիկի մէկ խօսքն է, որ ներուի մեզ ըսել թէ այս պարագաներու հետ յարարեութիւն չունի ընաւ: Վեհ. Հայրիկ Պոլսոյ մէջ եկեղեցի կառուցանելով գաղափարին դէմ է եղեր, առարկելով թէ Պոլսոյ մեր տունը չէ: «Որ մը պիտի թողունք օտարը օտարին, և մենք պիտի երթանք մեր Հայրենի տունը. ուստի լաւագոյն է որ, մենք զարգարենք

աւելի մեր անձնական տունը, քան օտարինը, զոր պիտի ստիպուինք որ մը թողուլ օտարին»: Նախ ըսելու է թէ մենք հոս եկեղեցի չենք շիներ երկիրը գարգարելու համար, այլ այս գաղթականութիւնն օտարին հետ խառնուելու վտանգէն կարելի եղածին շափ հետի պաշտու համար:

Տարբեր է Պոլսոյ մէջ եկեղեցի շինել, ուր արդէն շատեր կան, տարբեր է Ուէսթ Հոպոքընի մէջ եկեղեցի-ժողովարան մը կառուցանել: Եթէ այսպիսի ձեռնարկներ չըլլան, որ մը, այդ ալ մ'օտիկ ապագայի մէջ, Հայ մը չի պիտի գտնենք որ «օտարը օտարին թողու» ու Հայրենիք վերադառնայ:

Թո՛ղ մենք Հայրենիք վերադառնալու վիճակին մէջ ըլլանք, թո՛ղ գաղթականութիւնն նախապատու սեպէ մեկնիլ այս օտար ափուներէն, և թող այդպիսի շէնքերն այս երկրին համար զարգարանք մնան: Մենք անոնց միջոցաւ կ'որուստէ ազատուող Հայերն՝ շէնքէն շատ աւելի նախապատու կը սեպենք. անոնք թո՛ղ երթան Հայրենիքը զարգարելու: Այս պարագաներու տակ՝ Հայրիկ առաջին անձը պիտի ըլլայ, որ պիտի քաջակրէ այսպիսի ձեռնարկ մը, և տարակույս չունինք որ քիչ ստանէն Ն. Օ. Ծուրեմը պիտի ըսէ Ուէսթ Հոպոքընի Հայերուն «Օրհնեալ ըլլաք»:

Բայց եթէ հակառակ մեր համոզման, այս եկեղեցի ժողովարանը չի կարողանայ ուրիշ կերպիւ օգտակար ըլլալ Հայ գաղթականութեան, որպէս կը հաւատանք, տարակույս չունինք սակայն որ, օրին մէկը, Հայ գաղթականութեան հետքերն փրկուող Հայ հնախոյզի մը համար յիշատակարան մը կ'ըլլայ գէթ ձերբիկ բարձանց վրայ:

ԱՌԱՋԱՐԿՆԻՓԻՒՆ ԵՐ

ՏԻԳՐԻՍԻ 12րդ թուի խմբագրականին մէջ դիտել տուած էիք թէ, սեփական սրահի մը պէտք ունի Նիւ Եօրթի Հայ գաղթականութիւնը: Այս խնդրի մեր ուշագրութիւնն զբառուած է այդ օրէ ի վեր: Այժմ կ'առաջարկեմք որ մի քանի անձեր բաղկացեալ յանձնախումբ մը կազմուի, մեր ընկերութեանց հետ բանակցելու և այս խնդրին կերպով մը լուծելու համար:

Ահա աստիկ ժողովարանի համար, Հայոց կողմէ տարեկան վճարելիք ծախքերու մ'օտաւոր ցուցակը.

Ազգ. Հոգարարութիւն	80.00
Բարեգործական Ընկերութիւն	100.00
Ազգ. Լսարանի Վարչութիւն	156.00
Թանգարանի Միութիւն	50.00
Կանանց Որբախումբ Ընկ.	50.00
Կուսակցութիւններ	100.00
Հանդէսներ	100.00
Պատահական ժողովներ	50.00
Գումար	630.00

Ասոր մէջ չենք հաշուեր առանձին գրասենակի մը վարձքը, որ Բարեգործական Ընկերութիւնն պիտի սկսի վճարել:

Այս գումարի կիսովք իսկ դուրսն է Սեփական սրահ մը վարձել Բաղաքի մէջ, ուր ոչ միայն Թանգարանի Միութիւնն պիտի կրնայ իւր գրքերն դնել, այլ և Հայոց համար Ազգ. Կեդրոնավայր մը ունեցած կ'ըլլանք, ուր Հայերն, փոխանակ ճաշարաններու մէջ դեգերելու՝ լաւ տեղ մը կ'ունենան իրենց պարագայ փամբը օգտակար կերպով անցնելու համար:

Այս մասին յուսալով որ ուրիշներէ ալ կը լսենք ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ, ու կամաւոր գործակիցներ կ'ունենանք խնդրին իրաւործելու համար, Մնամ յարգանքը
Ա. ԳԸՐԸՊԸՅԸԿԵԱՆ

